Արձանագրություն N 2
«ԱՀԴ ՇՀ ԱՊՁԲ -15/1-102» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Նորամարգի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
Գ. Նորամարգ

«30 » «դեկտեմբերի» 2015թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Զարգարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Թադևոսյան, Մ. Մուրադյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին
(Ս. Զարգարյան)

Գնային առաջարկների հայտերը բացվել են «ՀՀ Արարատի մարզի Նորամարգի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում գյուղ Նորամարգ 17 փողոց 39 շենք հասցեում, ծանուցման օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրի հասցեները, տվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանատվության մասին
(Ս. Զարգարյան)

1.ՀՀ Կառավարության սահմանած կարգով ս.թ. դեկտեմբերի 21-ին ծանուցվել են <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ տվյալ պահին շրջանակային համաձայնագրեր կնքած և տվյալ պահին որպես հնարավոր մասնակից գրանցված բոլոր կազմակերպություններին:

2. Գնային առաջարկ պարունակող ծրար կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Հասցեն
1	<<Արմինաշող>> ՍՊԸ	Ք. Արարատ Սուրբ Ամենափրկիչ 28/4 հեռ 094 56 16 50
2	<<Ռուզ-Մարտի>> ՍՊԸ	Ք. Մասիս, ն/թ շ. 6, բն. 40 հեռ. 077 33 44 77
3	<<Արտաշատի պահածոների գործարան>> ԲԲԸ	Ք. Արտաշատ Օգոստոսի 23 փողոց 145 հեռ. 010282382
4	Ա/ Ձ Վահան Թադևոսյան	Գ. Նոր Խարբերդ Դատեմի փ. Հեռ. 077 40 50 73

Շրջանակային համաձայնագրեր կնքած և որպես հնարավոր մասնակից գրանցված մյուս կազմակերպությունների կողմից գնային արաջարկի ծրարներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝ 0 :

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին
(Ս. Զարգարյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում ընթացակարգի հրավերով /ծանուցմամբ/ պահանջվող փաստաթղթերը առկա են և կազմված սահմանված պահանջներին համապատասխան իսկ <<Արտաշատի պահածոների գործարան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում ընթացակարգի հրավերով /ծանուցմամբ/ պահանջվող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Համաձայն << Գնումների մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2 -րդ և 5-րդ կետի ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից/պատճենը բացակայում է/ : Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը /բացակայում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը/, հանձնաճողովը մերժում է հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝ 0 :